

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ **ԼՂՀ Հաղորդի շրջանի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերի համար**

Յ/ Յ	Դպրոցը	Առարկան	Ժամաքանակը
1	Հաղորդ	Ֆիզիկա	22
		Ֆիզկուլտուրա	21
		Դասվար	20
2	Քուրաթաղ	Աշխարհագրություն	12
3	Ակնաղբյուր	Հայոց լեզու և գրականություն	6
		Անգլերեն	18
		Ինֆորմատիկա	7
4	Ուխտաձոր	Դասվար	20
		Ռուսաց լեզու	16
		Մաթեմատիկա	6
		Ինֆորմատիկա	6
		Աշխարհագրություն	9
5	Թաղասեռ	Դաստիարակ	1 հաստիք
		Դասվար	17
		Հայոց լեզու և գրականություն	12
		Մաթեմատիկա	14
		Ֆիզիկա	14
		Ինֆորմատիկա	6
6	Առաջամուղ	Հայոց եկեղեցու պատմություն	6
		Ինֆորմատիկա	6
7	Առաքել	Անգլերեն	14
		Քիմիա	7
8	Մարիամաձոր	Հայոց լեզու և գրականություն	22
9	Հակակու	Անգլերեն	16
10	Խանձաձոր	Պատմություն	16
		Դասվար	12
		Քիմիա, կենսաբանություն	10
		Աշխարհագրություն	6
		Ռուսաց լեզու	13
		Անգլերեն	10
11	Հայկավան	Ռուսաց լեզու	14
		Անգլերեն	10
12	Բանաձոր	Դասվար	24
		Ռուսաց լեզու	16
		Անգլերեն	12
13	Արևշատ	Ֆիզիկա	12
14	Տումի	Քիմիա	11
		Մաթեմատիկա	28

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. 25-26,

առարկայական հարցաշարերը՝ 2014թ. 23-24 համարներում և տեղադրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է, (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 18-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 21-25-ն ընկած ժամանակահատվածում:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց: